ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/120

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Եվ Շին» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/22» ծածկագրով գնանշման հարցում, ներկանյութերի, պահեստամասերի և սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6272-2020 գրությամբ «Եվ Շին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1346-2020 գրության հիման վրա, 28.04.2020թ.-ին «Եվ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 28.04.2020թ.-ին:

29.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/120 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

20.05.2020թ.-ին և 01.06.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.06.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.04.2020թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/1346-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/22» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Եվ Շին» ՍՊ և «Եվ Շին» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակիցներ):

Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի բացման և գնահատման նիստը և ծանուցել Մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Եվ Շին» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթուղթ չի ներկայացրել, իսկ «Եվ Շին» ՍՊԸ-ն 13-րդ

չափաբաժնի մասով արձանագրված անհամապատասխանության շտկումը թերի է կատարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Եվ Շին» ՍՊԸ-ի հայտը 13-րդ չափաբաժնի մասով և «Եվ Շին» ՍՊԸ-ի հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/22» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Եվ Շին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Եվ Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 30.04.2020թ.-ին գրությամբ դիմել է «Եվ Շին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6272-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Մասնակիցը 04.05.2020թ.-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի՝ ՀՀ պաշտպանության նախարարության, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/22 ծածկագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ներկանյութերի, պահեստամասերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերին «Եվ Շին» ՍՊԸ-ն, որը գտնվում է Նորաշեն թաղ., 25 շ., բն. 17 հասցեում, ներկայացրել է հայտ, և հայտի բացման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ հավելված 1.1-ում: Հայտում տեղ գտած անհամապատասխանությունները վերացնելու համար ծանուցվել եմ ժամանակին, սակայն հնարավորություն չեմ ունեցել արձագանքելու: Ծանուցմանը չարձագանքելը ոչ այլ ինչ է, քան տեխնիկական անփույթություն, պայմանավորված ոչ աշխատանքային պայմ աններով, բնակությանս վայրի ժամանակավոր փոփոխման և ոչ կայուն ինտերնետային կապ

ունենալու հանգամանքներով: Հայցում եմ Ձեր և մրցույթի պատվիրատուի ներողամտություն, միևնույն ժամանակ հավաստիացնում, որ որևէ դիտավորություն կամ գիտակցված քայլ չի եղել իմ կողմից, որը կբերեր մրցույթին ներկայացված հայտում լրացված պարամետրերի անճշտությանը, հետագայում նաև դրանք շտկելու ցանկության բացակայությանը:

Պատրաստակամ եմ շտկել իմ կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում տեղ գտած անճշտությունները:

Միաժամանակ խնդրում եմ Ձեզ չներառելու «Եվ Շին» ՍՊԸ-ն գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և նշված գնանշման հարցման հրավերին մասնակցելու թույլտվության համար:

Որպես ասածիս հավաստում, անհրաժեշտ շտկված փաստաթղթի (հավելված 1.1) հետ կցում եմ նաև նշված գնանշման հարցման հայտի 8-րդ չափաբաժնի մասով ապրանքի արտադրողի հետ ձեռք բերված համաձայնությունը, որը հավաստիացվում է վերջինիս կողմից «Եվ Շին» ՍՊԸ-ին տրամադրված երաշխիքային նամակով: Պայմանավորվածություններ կան նաև 7-րդ չափաբաժնով ներկայացված անուն ապրանքի մասով:»:

4. <u>ՍՑ-LO-2020/120 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկանյութերի, պահեստամասերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով 27.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 8-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Եվ Շին» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ չի նշել առաջարկվող ապրանքների անվանումները, 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշել է «տոռսի երկարությունը՝ 4.5 մ», իսկ 17-րդ չափաբաժի տեխնիկական բնութագրում նշել է՝ «ԳՕՍՏ-10028-81 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ»:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.04.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Եվ Շին» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հավելված 1.1-ում բացակայել են առաջարկվող ապրանքների անվանումները:

v. Բացի այդ թիվ 1.1 հավելվածի 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում մասնակիցը նշել է «տռոսի երկարությունը՝ 4.5 մ», այնինչ հրավերով պահանջվել է «տռոսի երկարությունը՝ 6.5 մ», իսկ 17-րդ չափաբաժի տեխնիկական բնութագրում նշել է «ԳՕՍՏ-10028-81 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», սակայն պահանջով անհրաժեշտ էր կոնկրետ նշել կամ ԳՕՍՏ-ը, եթե առաջակվող ապրանքը ներկայացվելու էր ԳՕՍՏ-ով, կամ ՏՊ-ն, եթե առաջակվող ապրանքը ներկայացվելու էր ՏՊ-ով:

vi. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 10.04.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սակայն «Եվ Շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում փաստաթուղթ չի ներկայացվել:

vii. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 21.04.2020թ.-ին մերժել է «Եվ Շին» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6272-2020 գրությամբ «Եվ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացվում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև ներկայացվող չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի մակնիշը:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկանյութերի, պահեստամասերի և սարքավորումների ձեռքբերման նպատակով 27.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 8-րդ, 15-րդ և 17-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Եվ Շին» ՍՊԸ-ն թիվ 1.1 հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով՝ չի նշել առաջարկվող ապրանքների անվանումները, 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշել է «տռոսի երկարությունը՝ 4.5 մ», իսկ 17-րդ չափաբաժի տեխնիկական բնութագրում նշել է՝ «ԳOUS-10028-81 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ»:

Հանձնաժողովի 06.04.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Եվ Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հավելված 1.1-ում բացակայել են առաջարկվող ապրանքների անվանումները: Բացի այդ թիվ 1.1 հավելվածի 15-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում մասնակիցը նշել է «տռոսի երկարությունը՝ 4.5 մ», այնինչ հրավերով պահանջվել է «տռոսի ոկարությունը՝ 6.5 մ», իսկ 17-րդ չափաբաժի տեխնիկական բնութագրում նշել է «ԳOUS-10028-81 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ», սակայն պահանջով անհրաժեշտ էր կոնկրետ նշել կամ ԳOUS-ը, եթե

առաջակվող ապրանքը ներկայացվելու էր ԳՕՍՏ-ով, կամ ՏՊ-ն, եթե առաջակվող ապրանքը ներկայացվելու էր ՏՊ-ով:

Հանձնաժողովը 10.04.2020թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել է Մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ, սակայն «Եվ Շին» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում փաստաթուղթ չի ներկայացվել, ինչով պայմանավորված Հանձնաժողովը 21.04.2020թ.-ին մերժել է «Եվ Շին» ՍՊԸ-ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ չշտկելով հայտում առկա արձանագրված անհամապատասխանությունները, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Եվ Շին» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6272-2020 գրությամբ «Եվ Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/120 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Եվ Շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ